

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
վարչության նիստի

ք. Երևան

27 ապրիլի 2020թ.

Մասնակիցների ցուցակ՝

- | | |
|------------------------|------------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան | 8. Լիաննա Գալստյան |
| 2. Անդրանիկ Ալեքսանյան | 9. Կոյա Հովհաննիսյան |
| 3. Աննա Կարախանյան | 10. Միսակ Խաչատրյան |
| 4. Արամ Վերդյան | 11. Միրանուշ Վարդանյան |
| 5. Արման Ներսիսյան | 12. Քրիստինա Հակոբյան |
| 6. Գրիգորի Սադյան | 13. Քրիստինե Գյոնջյան |
| 7. Իգոր Մկրտումյան | |

Նիստին ներկա էին նաև կազմակերպության մի շարք անդամներ՝ Նարինե Դերձակյանը, Վեսմիրա Հարությունյանը, Կատարինե Գևորգյանը, Վահան Հովսեփյանը, Մամվել Բեկյաշյանը, Գագիկ Սարգսյանը:

Նիստի սկզբում նիստի նախագահող ընտրվեց Իգոր Մկրտումյանը, քարտուղար՝ Աննա Կարախանյանը:

Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության առաջիկա ժողովը հեռակա կարգով անցկացնելու առաջարկի մասին:
2. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողովների վերաբերյալ ծանուցման առավել նախընտրելի եղանակը պարզելու նպատակով կազմակերպված հարցման արդյունքները ի գիտություն ընդունելու մասին:
3. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամ Վահան Հովսեփյանի կողմից ներկայացված հարցադրումների և առաջարկությունների վերաբերյալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության վարչության ղիրքորոշման մասին:

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության առաջիկա ժողովը հեռակա կարգով անցկացնելու առաջարկի մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Իգոր Մկրտումյանը՝ առաջարկելով ղիտարկել կազմակերպության առաջիկա ժողովը հեռակա կարգով անցկացնելու տարբերակը՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությամբ: Որից հետո առաջարկի վերաբերյալ հնարավորություն տրվեց արտահայտվելու ինչպես վարչության, այնպես էլ նիստին ներկա կազմակերպության անդամներին: Գրեթե բոլոր ելույթ ունեցողները համաձայնվեցին առաջարկի հետ՝ ներկայացնելով իրենց տեսակետները հեռակա կարգով ժողովն անցկացնելու դեպքում հեռահաղորդակցության նախընտրելի միջոցների

ընտրության շուրջ: Քննարկվեցին ժողովը հեռակա կարգով անցկացվելու դեպքում կազմակերպության անդամների նույնականացման, օրակարգային հարցերի քննարկման և քվեարկության անցկացման հետ կապված հարցեր: Առաջարկվեց նաև մինչև ժողովի անցկացումը կազմակերպության անդամների համար կազմակերպել ընտրված հեռահաղորդակցության միջոցի փորձարկում, ինչը կհեշտացնի աշխատանքը բուն ժողովի ընթացքում:

Հնչեցին նաև կարծիքներ առաջիկա ժողովը համատեղ հավաքի ձևով անցկացնելու (հաշվի առնելով, որ առաջիկա ժողովում քննարկվելու է կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծի ընդունման հարցը), օրակարգով պայմանավորված հեռակա կարգով ժողովն անցկացնելու նպատակահարմարությունը դիտարկելու, ժողովն ավելի ուշ անցկացնելու հնարավորությունը դիտարկելու վերաբերյալ:

Քննարկման արդյունքում ձայների 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ (Կոյսա Հովհաննիսյանը չմասնակցեց քվեարկությանը) որոշվեց հավանություն տալ «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության առաջիկա ժողովը հեռակա կարգով անցկացնելու առաջարկին: Կազմակերպության աշխատակազմին տրվեց արձանագրային հանձնարարական՝ հեռակա կարգով ժողովի անցկացման համար ուսումնասիրելու և կազմակերպության վարչությանը ներկայացնելու առաջարկություններ հեռահաղորդակցության նախընտրելի միջոցների վերաբերյալ:

Որոշում՝ *Հավանություն տալ «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության առաջիկա ժողովը հեռակա կարգով անցկացնելու առաջարկին:*

Արձանագրային հանձնարարական՝

«Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության աշխատակազմին՝ կազմակերպության առաջիկա ժողովը հեռակա կարգով անցկացնելու համար ուսումնասիրել և կազմակերպության վարչությանը ներկայացնել առաջարկություններ հեռահաղորդակցության նախընտրելի միջոցների վերաբերյալ:

2. «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողովների վերաբերյալ ծանուցման առավել նախընտրելի եղանակը պարզելու նպատակով կազմակերպված հարցման արդյունքները ի գիտություն ընդունելու մասին:

Նիստի մասնակիցներին ներկայացվեցին «Բնտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողովների վերաբերյալ ծանուցման առավել նախընտրելի եղանակը պարզելու նպատակով կազմակերպված հարցման արդյունքները: Հարցման արդյունքների համաձայն, կազմակերպության 196 անդամներից 111-ը նախապատվություն է տվել կազմակերպության ժողովների վերաբերյալ ծանուցումները ստանալ էլեկտրոնային փոստով, 19-ը՝ կարճ հաղորդագրությունների (sms հաղորդագրությունների), 32-ը՝ «Telegram» հավելվածի և 5-ը՝ «WhatsApp» հավելվածի միջոցով: Կազմակերպության 29 անդամ չի մասնակցել հարցմանը:

Հարցման արդյունքների ներկայացումից հետո ծավալվեց քննարկում: Քննարկման ընթացքում հնչեցին մի շարք առաջարկություններ՝ ժողովների վերաբերյալ կազմակերպության

անդամների ծանուցումն իրականացնել հարցման արդյունքների համաձայն, հարցման արդյունքում առավել շատ ձայն ստացած երկու եղանակներով, ի լրումն էլեկտրոնային փոստի նաև կարճ հաղորդագրությունների (sms հաղորդագրությունների) միջոցով, հարցման մեջ ներառված և այլ միջոցներով: Տեսակետ հնչեց, որ անհրաժեշտ է օգտագործել էլեկտրոնային հաղորդակցության բոլոր հնարավոր միջոցները, անդրադարձ եղավ կազմակերպության անդամների հետ շփման պատասխանատուի վերաբերյալ, ինչպես նաև կազմակերպչական բնույթի այլ հարցերին: Նշվեց նաև, որ վարչությունը իր նախորդ նիստում արդեն իսկ արձանագրել է, որ ժողովների վերաբերյալ կազմակերպության կողմից ներկայումս կիրառվող՝ էլեկտրոնային փոստով իրազեկման եղանակը պատշաճ իրազեկման առաջնային և արդյունավետ միջոցն է:

Քննարկման արդյունքում կազմակերպության վարչությունը միաձայն որոշեց՝

ա) ի գիտություն ընդունել հարցման արդյունքները,

բ) ի լրումն էլեկտրոնային փոստի՝ կազմակերպության այն անդամներին, ովքեր նախընտրել են կազմակերպության ժողովների վերաբերյալ ծանուցումները ստանալ՝

- կարճ հաղորդագրությունների (sms հաղորդագրությունների) միջոցով՝ ծանուցել նաև այդ եղանակով,
- «Telegram» հավելվածի միջոցով՝ ծանուցել նաև այդ եղանակով,
- «WhatsApp» հավելվածի միջոցով ծանուցել նաև այդ եղանակով:

Որոշում՝ 1. *Ի գիտություն ընդունել «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողովների վերաբերյալ ծանուցման առավել նախընտրելի եղանակը պարզելու նպատակով կազմակերպված հարցման արդյունքները:*

2. *Ի լրումն էլեկտրոնային փոստի՝ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության այն անդամներին, ովքեր նախընտրել են կազմակերպության ժողովների վերաբերյալ ծանուցումները ստանալ՝*

1) *կարճ հաղորդագրությունների (sms հաղորդագրությունների) միջոցով՝ ծանուցել նաև այդ եղանակով,*

2) *«Տելեգրամ» (Telegram) հավելվածի միջոցով՝ ծանուցել նաև այդ եղանակով,*

3) *«ՎոթսԱփ» (WhatsApp) հավելվածի միջոցով՝ ծանուցել նաև այդ եղանակով:*

3. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամ Վահան Հովսեփյանի կողմից ներկայացված հարցադրումների և առաջարկությունների վերաբերյալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության վարչության ղեկավարության մասին:

Մինչև բուն հարցին անդրադառնալը նիստը նախագահողի կողմից հստակեցվեց հարցի քննարկման ընթացակարգը: Որից հետո, առաջարկված ընթացակարգի համաձայն, հարցադրումների և առաջարկությունների հեղինակին՝ կազմակերպության անդամ պարոն Վահան Հովսեփյանին հնարավորություն տրվեց ներկայացնելու իր հարցադրումները և առաջարկությունները: Ներկայացված հարցադրումների և առաջարկությունների վերաբերյալ տրվեցին պարզաբանումներ: Այսպես, «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ում և «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ում ֆինանսական և գործառնական աուդիտի վերաբերյալ հարցադրմանն ի պատասխան՝ նշվեց, որ ներկայումս այդ երկու կազմակերպություններում

իրականացվում է ներքին աուդիտ (ներքին ուսումնասիրություններ), որը նախատեսվում է ավարտել մեկ ու կես ամսվա ընթացքում:

«Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի ժողովների պատշաճ կազմակերպման նպատակով «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՄՊԸ-ի աշխատակազմին ներգրավելու վերաբերյալ առաջարկին ի պատասխան՝ վարչության անդամ, «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՄՊԸ-ի տնօրեն պարոն Արման Ներսիսյանը շեշտեց, որ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի ժողովների պատշաճ կազմակերպման հարցերը չեն հանդիսանում և չեն կարող հանդիսանալ «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՄՊԸ-ի և նրա աշխատակազմի խնդիրը, չեն մտնում ու չեն կարող մտնել ՄՊԸ-ի աշխատակիցների աշխատանքային գործառույթների և պարտականությունների մեջ:

Կարգապահական միջոցները սահմանելու առաջարկի վերաբերյալ (որոնք պետք է կիրառվեն կազմակերպության անդամների հարցումներին պատասխան ներկայացնելու համար պատասխանատու հանդիսացող «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի պաշտոնատար անձանց նկատմամբ) պարզաբանվեց, որ այդ միջոցները սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

Ինչ վերաբերում է կազմակերպության անդամների հետ շփման պատասխանատուին, ժողովների պատշաճ կազմակերպման համար ծանուցման եղանակներին վերաբերող առաջարկներին, ապա պարոն Հովսեփյանը նշեց, որ այդ հարցերին անդրադարձ է կատարվել և (կամ) լուծում է տրվել օրակարգային նախորդ հարցի քննարկման ժամանակ՝ հանելով իր առաջարկները:


Հատուկ ուշադրություն դարձվեց վարչության նիստերի վերաբերյալ կազմակերպության անդամներին ծանուցելու հարցին: Կարևորվեց կազմակերպության անդամների հարցումներին ժամանակին արձագանքելու հարցը՝ այդ կապակցությամբ առաջարկելով դիտարկել համապատասխան ընթացակարգեր սահմանելու տարբերակը, ինչպես նաև անդրադարձ եղավ կազմակերպության անդամների կողմից կատարվող հարցումների շրջանակը հստակեցնելու խնդրին:

Քննարկման արդյունքում տրվեց հետևյալ արձանագրային հանձնարարականը՝

Արձանագրային հանձնարարական՝


«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության աշխատակազմին՝ կազմակերպության անդամների կողմից կատարվող հարցադրումների և առաջարկությունների վերաբերյալ իրազեկման, տեղեկատվության տրամադրման գործընթացները հստակեցնելու նպատակով կազմակերպության վարչությանը ներկայացնել առաջարկություններ կամ ընթացակարգեր:

Նիստի նախագահող՝



Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝



Աննա Կարախանյան